ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Անկախության օրվա առթիվ

21.09.2023

Սիրելի՛ հայրենակիցներ,

Անկախության օրը բոլորիս համար պատգամ է միասնականության, համախմբման, ինքնաճանաչման, համերաշխության համար:

Ինչ-որ ունենք այսօր՝ ազատություն, անկախություն, հայրենիք, պետականություն, այդ ամենի համար պարտական ենք ինքներս մեզ: Ինչ-որ կարողանալու ենք պահպանել, ձեռք բերել, ամրապնդել, դարձյալ լինելու է մեր շնորհիվ և միմիայն մեր համախմբվածության, մեր միասնական ջանքերի, նպատակների, գործի վերածված մեր մտքերի և դրանց իրականացման համար:

Ինչպես անկախության ձեռք բերման բախտորոշ օրերին և դրան հաջորդող դժվար տարիներին, այսօր էլ մեր պետության առջև կան մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարենք միմիայն մեր ուժերով:

Այսօր առավել ևս չպետք է ընկճվենք, պետք է համառորեն պայքարենք, չպետք է խնայենք մեզ և մեր ուժերը պետք է ներդնենք մեր անկախ հայրենիքի հզորացման համար: Մեր ջանքերը միտված պետք է լինեն մեր վիրավոր հայրենիքի, նրա խաղաղության երաշխավոր հայկական բանակի ամրացմանն ու մարտունակության բարձրացմանը:

Պարտավոր ենք անշահախնդիր սիրով սիրել հայրենիքն ու միմյանց, սատարենք իրար և ստեղծենք այն Հայաստանը, որը երազում ենք:

Հարգարժա՛ն հայրենակիցներ, խաղաղություն, բարեկեցություն և առաջընթաց եմ մաղթում բոլորիս՝ հանուն Հայաստանի Հանրապետության հզորացման և բարգավաճման: